ԿՐՈՆԸ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ՀԱՐՈՅԱՆ Հ. Ա.

Որպես հոգևոր առաջընթացի յուրօրինակ արտացոլում ու վավերացում՝ կրոնն իր ուրույն տեղն ու դերն է ունեցել մշակույթի համակարգում: Մշակութային արժեքների համակարգում կրոնական տարրի տեղի ու դերի որոշումը բարդ է թե' ծագումնաբանական և թե՛ հոգևոր գործունեության մյուս ձևերի հետ ունեցած փոխազդեցությունների առումով: Դարեր շարունակ լինելով տիրապետող տարր հոգևոր արժեքների համակարգում՝ կրոնը հաճախ սերտաճել է հոգևոր գործունեության մյուս ձևերի հետ և, իր գործառույթներով ընդգրկելով իրականության, հասարակական կյանքի բոլոր ոլորտները, անմիջականորեն ազդել է մարդկանց հոգեբանության և գիտակցության վրա՝ որոշելով նրանց վարքագիծն ու գործողությունները, հարաբերություններն ու մտածելակերպը:

Կրոնը՝ որպես մշակույթի տարր, մշակութային արժեք է, իսկ որպես հոգևոր գործունեության, աշխարհաճանաչողության ու աշխարհիմաստավորման յուրահատուկ եղանակ՝ իրականությանը հարմարվելու ընդհանրական միջոց: Եվ որպես այդպիսին՝ կրոնը նույնպես օժտված է մշակույթին բնորոշ գործառույթներով[1]: Սովորաբար մշակույթը բաժանում

[1] Որպես կանոն՝ առօրյա գիտակցության մակարդակում, հաճախ նաև մասնագիտական գրականության մեջ մշակույթ ասելով նկատի են առնվում արվեստի և գրականության ոլորտում ստեղծված արժեքները: Մինչդեռ «մշակույթ» հասկացությունը ներառում է ոչ միայն արվեստն ու գրականությունը, այլև իրականության հոգևոր յուրացման մյուս ձևերի՝ բարոյական, գիտական, փիլիսոփայական, քաղաքական, իրավական, կրոնական ոլորտներում ստեղծված արժեքները: Օրինակ՝ մշակութային արժեք են ոչ միայն կտավը, պոեմը, սիմֆոնիան, տաճարը, այլև համակարգիչը, աստղադիտակը, տիեզերանավը, բարոյական, կրոնական կամ իրավական նորմը, փիլիսոփայական, ազատախոհական գաղափարներն ու գիտական ուսմունքները: «Մշակույթ» հասկացությունը գործածվում է նաև մարդկության, ժողովուրդների հոգևոր և նյութական ոլորտներում ունեցած նվաճումներն ու ձեռքբերումները բնութագրելու իմաստով: Նեղ՝ կրթելու, դաստիարակելու իմաստով «մշակույթ» հասկացությունը բնութագրում է մարդու հոգեվոր-մտավոր զարգացման մակարդակը, կրթվածության աստիճանը, գիտելիքները, փորձը, հմտություններն ու տաղանդը, առհասարակ մշակութային արժեքները յուրացնելու նրա ընդունակությունը: Այս իմաստով էլ գործածվում են կիրթ, բարեկիրթ (կուլտուրական) մարդ, քաղաքակիրթ (կուլտուրական) ժողովուրդ, երկիր և այլն: Ընդհանուր առմամբ, մշակույթը իրականության հոգևոր յուրացման ընդհանրական ձև է, մարդու՝ որպես արարող էակի հոգևոր և նյութական նպատակադիր գործունեությամբ ստեղծված արժեքների (գիտելիքներ, փորձ, սովորույթներ) միջոցով բնությանն ու հասարակությանը հարմարվելու, դրանք օգտագործելու, պահպանելու ու սերունդներին փոխանցելու եղանակների համակարգ (Տե՛ս **Маркарян Э.,** ***Генезис культуры и человеческой деятельности, Е., 1973, с. 20-21***): Հաճախ որպես մշակույթի հոմանիշ գործածվում է «քաղաքակրթություն» հասկացությունը: Այն երբեմն կիրառվում է իբրև մարդկության պատմության հետբարբարոսական շրջանը բնութագրելու կամ մշակույթի յուրահատկությունները մատնանշելու (օր.՝ հին քաղաքակրթություն) կամ մշակույթների մեջ ընդհանուրը առանձնացնելու (օր.՝ արևելյան քաղաքակրթություն, արևմտյան քաղաքակրթություն) իմաստներով (Տե՛ս ***Религия в истории и культуре. Учеб., М., 2000, с. 29; Тайлор Э. Б., Первобытная культура, М., 1989, с. 18 и др.***): Իրականում «քաղաքակրթություն» հասկացությունն ավելի լայն է, քան «մշակույթ» հասկացությունը (Տե՛ս Գևորգյան Հ. Ա., Փիլիսոփայություն, Պատմություն, Մշակույթ, Ե., 2005, էջ 389): Քաղաքակրթությունը ենթադրում է զարգացած մշակույթ և դրան համարժեք կենսագործող հասարակություն, որը մշակութային արժեքների տվյալ համակարգում ապահովում է մարդու (անհատի, քաղաքացու) ազատ զարգացումը: Մի խոսքով՝ քաղաքակրթությունը մշակույթն է գործողության մեջ:

են նյութական և հոգևոր տեսակների, և ըստ այդմ էլ մշակույթի մեջ առանձնացվում են երկու՝ նյութական և հոգևոր կողմեր: Կրոնը մշակույթի տարր է թե՛ իր նյութական և թե' հոգևոր կողմերով[2]:

Նշանավոր ազգագրագետ Ջ.Ֆրեզերի «Ամբողջ մշակույթը տաճարից է» միտքը, որը գրեթե մեթոդաբանական արժեք է ձեռք բերել կրոն-մշակույթ փոխհարաբերությունը դիտարկելիս և հաճախակի է հիշատակվում հետազոտողների (կրոնագետներ, մշակութաբաններ, ազգաբաններ) կողմից և գրեթե մեթոդաբանական արժեք է ձեռք բերել կրոն-մշակույթ փոխհարաբերությունը դիտարկելիս, հարաբերականորեն կիրառելի է հին և միջին դարերի մշակույթի համար: Նոր և նորագույն ժամանակների մշակույթը զարգանում է հիմնականում աշխարհիկ հիմքի վրա: Այսպես, սոցիոլոգները վաղուց ապացուցել են, որ հասարակական առաջընթացին զուգընթաց՝ մշակույթի ոլորտում, մասնավորապես արվեստի գործերում, կրոնական թեմատիկան աստիճանաբար իր տեղը զիջում է աշխարհիկին[3]:

Կրոնը մշակույթի ամենակայուն, ամենակառուցողական տարրերից է, բայց ոչ որպես բացարձակ ինքնուրույն և մեկուսի մի երևույթ, այլ բարոյականի, գեղագիտականի և իմացականի յուրօրինակ համադրմամբ: Կրոնին մշակութաստեղծ գործառույթ վերագրելու իմացաբանական հիմքը նախ և առաջ կրոնական իմացության համադրական բնույթն է, որը ժառանգվել է դիցաբանական աշխարհընկալումից: Մշակութային արժեքների համակարգում որևէ տարր կարող է դառնալ տիրապետող, ազդել մյուս տարրերի վրա, ենթարկել, ծառայեցնել իրեն ժամանակավորապես, բայց ոչ երբեք որոշել, պայմանավորել, առավել ևս ստեղծել համակարգ: Դեռևս մեկ դար առաջ կրոնագիտության հիմնադիրներից Կ. Տիլը գրել է. «Կրոնը մշակույթի ստեղծագործական նախապատճառ, մայրական հիմք համարելը հազիվ թե արդարացի լինի»[4]: Հիրավի, նույնիսկ եկեղեցում, վանքում եկեղեցականի ու վանականի ստեղծած հոգևոր արժեքները, նույն այդ եկեղեցիներն ու վանքերը՝ որպես ճարտարապետական կոթողներ, զուտ կրոնական համարելը իրավացի չի լինի, քանզի մշակութային արժեքներ են համարվում կրոնական այն գործերն ու կառույցները, որոնք ստեղծված են գեղարվեստի օրենքներին համապատասխան, և դրսևորման ձևով լինելով կրոնական՝ բովանդակությամբ ազգային են ու համամարդկային: Այս տեսանկյունից արդեն գիտական գրականության մեջ հաճախ գոր-

[2] Նյութական արժեքներ են կրոնական շինությունները, տաճարները, եկեղեցիները, վանքերն ու մենաստանները, կրոնական գրքերն ու աստվածաբանական գրականությունը: Հոգևոր արժեքները ներառում են նաև կրոնական նորմերը, կրոնական գաղափարներն ու ուսմունքները, լեզվամտածողությունից մինչև ծիսական գործողությունների հետևանքով առաջացած հոգեվիճակներն ու ապրումները:

[3] Տե՛ս ***Религия в истории и культуре, с. 352.***

[4] Նույն տեղում, էջ 345:

ծածվող «քրիստոնեական քաղաքակրթություն կամ մշակույթ», «բուդդիստական մշակույթ», «իսլամական մշակույթ» բնորոշումներում ընդամենը ամրագրված է մշակույթի զարգացման վրա այդ կրոնների ունեցած ազդեցության իրողությունը: Կրոնական մշակույթը, ավելի ճշգրիտ՝ կրոնական ձևի մեջ դրսևորվող նյութական և հոգևոր արժեքները՝ իբրև այս կամ այն ժողովրդի (էթնոսի) մշակույթի կարևորագույն բաղադրամաս, երբեք չեն կարող ամբողջությամբ ընդգրկել, արտացոլել «մշակույթ» հասկացության բովանդակությունը: Այդ իսկ առումով էլ «իսլամական մշակույթ» և «արաբական մշակույթ» կամ «քրիստոնեական մշակույթ (քաղաքակրթություն)» և «արևմտյան մշակույթ (քաղաքակրթություն)», առավել ևս՝ «ազգային մշակույթ» և «կրոնական մշակույթ» հասկացությունների նույնացումն անընդունելի է, ոչ գիտական: Իրականում գոյություն ունի, կա տվյալ ժողովրդի մշակույթ, որը պատմական զարգացման ընթացքում կարող է դրսևորվել աշխարհիկ կամ կրոնական ձևի մեջ, և կախված պատմական իրադրությունից՝ կրոնականը կարող է նույնիսկ լինել տիրապետող, սակայն ամբողջությամբ փոխարինել մշակույթին, չի կարող: Նախ՝ մշակութային որոշակի արժեքներ ստեղծվել են նաև մինչև այս կամ այն կրոնի առաջացումը՝ կրոնից ու եկեղեցուց անկախ: Այսպես, մշակույթի զարգացման պատմության մեջ յուրահատուկ մի փուլ է տոհմատիրական հասարակարգի մշակույթը, որի բաղադրամասերից են աշխատանքի գործիքները, կենցաղային իրերը, հավատալիքները, սովորույթներն ու կիրառական արվեստի նմուշները: Մասնավորապես, նախնական հավատալիքներում (տոտեմիզմ, անիմիզմ, ֆետիշիզմ, մոգություն) ամրագրված անմիջական գիտելիքներն ու ծիսակարգը՝ իբրև իրականությանը, բնական միջավայրին հարմարվելու հոգևոր-գործնական եղանակներ, անպայմանորեն ներառվում են մշակութային արժեքների համակարգի մեջ: Եվ առհասարակ, կրոնի հետ ոչ մի առնչություն չունեն մշակութային այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ժողովրդական, ազգային երգերը, պարերը, վիպասանությունները, առասպելները, ներկայացումները, արհեստները, կիրառական արվեստի գործերը[5]:

Անառարկելի իրողություն է միաստվածական կրոնների (թե' համաշխարհային և թե' ազգային) դրական ազդեցությունը հասարակական առաջընթացի վրա: Սակայն լինելով այդ նույն առաջընթացի յուրօրինակ արտացոլումներ ու գաղափարական վավերացումներ՝ դրանք եղել են հոգևոր-գաղափարական հեղաշրջումներ էթնոսների ու ժողովուրդների պատմության մեջ (օրինակ՝ վաղ քրիստոնեության առաջադրած համընդհանուր սիրո, հավասարության, եղբայրության, ազատության, աստվածամարդու գաղափարները մարդասիրական մեծ լիցք են ներառել և դարձել հոգևոր-բարոյական զարգացման հզոր ազդակներ): Նշանավորելով հոգևոր հասունացման նոր աստիճան, հասարակական-պատմական զարգացման նոր մակարդակ՝ կրոնական այդ ուսմունքները, մասնավորապես միասնական հավատի իրենց քարոզչությամբ հաստատելով հոգևոր-գաղափարական միասնություն՝ արագացրել են էթնոսների, ժողովուրդների

[5] Տե՛ս **Яковлев Е. Г.**, ***Искусство и мировые религии, М., 1985;*** **Тэнасе**, ***Культура и религия, М., 1977 и др.***

միավորման ու կայացման գործընթացը: Փաստելով համաշխարհային կրոնների քաղաքակրթական ազդեցությունը հասարակական առաջընթացի գործում՝ չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ համաշխարհային կրոնների առաջացումն ու ձևավորումը այդ նույն առաջընթացի արտացոլումներն էին: Առաջադիմականն այն էր, որ դրանք նվազեցրին էթնոսների օտարման աստիճանը, փշրեցին ինքնամեկուսացման կաղապարները, նպաստեցին ազգերի արագ կայացմանը: Ամենագլխավորը՝ էթնոսներն արագորեն ներգրավվեցին համամարդկային, վերազգային ու վերկրոնաեկեղեցական գործընթացների մեջ: Համաշխարհային կրոնների մեջ առավել հստակ ընդգծված է բոլոր էթնոսների համար հանրանշանակը, ընդունելին, որը և նրանց շփման, մերձեցման ու փորձի փոխանակման հնարավորություն է ստեղծում: Ակնհայտ է քրիստոնեության գաղափարների դրական ազդեցությունը եվրոպական քաղաքակրթության ու մշակույթի զարգացման վրա: Այսպես, Քրիստոսի ուսմունքը, վաղ քրիստոնեական գաղափարների քարոզչությունը «մարդկության հոգևոր պատմության մեջ» հեղափոխական են համարել Վ. Հեգելը և Ֆ. Էնգելսը:[6] Նույնանման դեր են խաղացել նաև համաշխարհային մյուս կրոնները՝ բուդդիզմը և իսլամը, դրանք դավանող ժողովուրդների և էթնոսների մշակույթի ու պատմության մեջ: Ստեղծելով հոգևոր-գաղափարական միասնություն՝ միաստվածական կրոնները էապես ազդել են այն դավանող ժողովուրդների լեզվամտածողության և հոգեկերտվածքի ձևավորման վրա, դրանով իսկ պայմանավորել նրանց մշակութային զարգացման յուրահատկությունները:

Ինչպես տարբեր դարաշրջաններում, այնպես էլ տարբեր ժողովուրդների պատմության մեջ կրոն-մշակույթ փոխհարաբերությունը ունեցել է իր յուրահատուկ դրսևորումները: Պատմականորեն կրոնը առավել մեծ ազդեցություն է ունեցել ազգային ինքնագիտակցության, ժողովրդի (էթնոսի) մշակույթի զարգացման վրա: Յուրաքանչյուր էթնոսի կենցաղն ու ավանդույթները, նրա լեզուն և սովորույթները դրոշմված են նախնիների հավատալիքներով: Էթնոհոգեբանության մեջ ապացուցված է, որ էթնիկ ինքնագիտակցության սկզբնաղբյուրը ոչ միայն արյունակցական կապն է, համատեղ աշխատանքն ու համակեցությունն են, այլև սրբատեղիներում համատեղ կատարվող ընդհանուր ծեսերն ու աղոթքները: Որքանով որ էթնոսի գիտակցության և ենթագիտակցության արմատները թաքնված են հեթանոսության մեջ, այդքանով էլ վերջինս, ընդհանուր առմամբ, որոշել է ինչպես ավելի ուշ ձևավորված միաստվածական (ազգային և համաշխարհային) կրոնների ու քաղաքակրթությունների դիմագիծը, այնպես էլ ազգային մշակույթների յուրահատկությունները:

Արևելյան մշակույթում կրոնականն ու աշխարհիկ-մշակութայինը այնքան են սերտաճած, միահյուսված, որ գրեթե անհնար է դրանք տարբերակել: Հայաստանի պարագայում այդ յուրահատկությունը դրսևորվում է ազգային-պատմական որոշակի երանգավորումներով: Եթե հայ հեթանոսական մշակույթը զուտ արևելյան մշակույթի կրողն է արժեքային իր համակարգով, ապա IV-V դդ. քրիստոնեության ընդունումով հայ մշա-

[6] Տե՛ս **Гегель В. Ф. Г.,** ***Философия религии, т. 2, М., 1977, с. 286.***

կույթում տեղի ունեցավ անճանաչելի մի ձևափոխություն. փորձ արվեց հոգով, առանձնահատկություններով, արմատներով արևելյան մշակույթ ստեղծած ու դրանով սնված հայ էթնոսին կտրել իր արմատներից ու պարտադրել կրոնաբարոյական այլ արժեքների համակարգ: Ըստ էության, հակասական մշակութային այդ պատվաստը որքան առաջադիմական էր բանականության դիրքերից, նույնքան բացասական եղավ հայ էթնոսի ոգու, նրա պատմական հիշողության ձևախեղման առումով: Իհարկե, կրոնական գաղափարները, լինելով սոցիալ-պատմական զարգացման ընթացքի ու միտումների յուրովի արտացոլումներ, հետագայում ձեռք բերելով հարաբերական ինքնուրույնություն, հակադարձ ազդեցություն են գործում հասարակական-տնտեսական, հոգևոր-գաղափարական ոլորտների վրա՝ ձևավորելով որոշակի արժեքների համակարգ, որի հիման վրա էլ ձևավորվում են հասարակական հարաբերությունները, մարդկանց մտածելակերպն ու վարքագիծը: Այսպես, Մ. Լյութերը՝ իբրև բողոքականության հիմնադիր, XVI դ. ընդամենը կրոնական ձևի մեջ արտահայտեց սաղմնավորվող բուրժուական հասարակարգի կրոնաբարոյական և աշխարհայացքային կողմնորոշիչները: Եվ քանի որ բուրժուական հարաբերությունների ձևավորումը Եվրոպայում ծնեց քրիստոնեության բողոքական հոսանքը, ուստի և նշանավոր սոցիոլոգ Մ. Վեբերի «կապիտալիզմը բողոքականության ոգու դրսևորումն է» բնորոշումը ճիշտ է միայն հակադարձ ազդեցության տեսանկյունից, այն է՝ բողոքականությունը, լինելով հասարակական առաջընթացի միտումների կրոնական արտացոլումը, նպաստել է ոչ միայն կապիտալիզմի, այլև այն դավանող ժողովուրդների ոգու ձևավորմանը:

Կրոնի և մշակույթի միջև առավել բարդ փոխազդեցություն է ձևավորվել միջնադարյան Եվրոպայում՝ առհասարակ, Հայաստանում՝ մասնավորապես: Եվրոպական իրականության մեջ մինչև XVIII դ., իսկ հայ իրականության մեջ մինչև XIX դ. կեսերը եկեղեցու ազդեցության ներքո են գտնվել մշակույթի գրեթե բոլոր ոլորտները: Սակայն ստանձնելով մշակույթի հովանավորի դեր՝ եկեղեցին չնպաստեց մշակութային առաջընթացին: Այո, միջնադարում եկեղեցին միաժամանակ եղել է դպրոց և համալսարան, ակումբ և գրադարան, համերգասրահ և թատրոն: Գաղափարապես և հոգեպես իշխելով հասարակական գիտակցության և հոգեբանության վրա՝ եկեղեցին մշակույթի նկատմամբ միաժամանակ կատարել է և՛ հովանավորի, և՛ գրաքննիչի դեր, դրանով իսկ հարկադրել է մշակույթին գեղագիտական, ճանաչողական, բարոյական իր գործառույթներով սպասարկել կրոնին, վերածվել պաշտամունքի իրականացման ու կրոնական հավատի ամրապնդման միջոցի: Մշակույթի վրա հոգևոր այդ բռնի իշխանությունը (դիկտատուրան) հատկապես նկատելի է միջնադարի կաթոլիկ երկրներում, որտեղ եկեղեցու տիրապետությունը համընդհանուր էր: Եվ ամենուրեք՝ բարոյականության և արվեստի, կրթության և դաստիարակության ոլորտներում, թելադրելով իրենը, եկեղեցին սքոլաստիկական մտածողության կաղապարներով կաշկանդել է փիլիսոփայական միտքը, գիտական որոնումները:

Մյուս կողմից միջնադարում՝ կրոնի ու եկեղեցու համընդհանուր տիրապետության պայմաններում, կրոնական հավատն ու կրոնական գաղափարը վերածվել են ստեղծագործական ներշնչանքի աղբյուրի, ինչի պերճա-

խոս վկայությունը միջնադարի արվեստն ու մշակույթն են: Կրոնական Ս. Գրքերի (Աստվածաշունչ, Վեդաներ) թեմաներով անանց արժեքներ են ստեղծվել գրականության, գեղանկարչության, երաժշտության, քանդակագործության և արվեստի այլ ոլորտներում: Այսպես, Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության»-ը, Դ. Ալիգիերիի «Աստվածային կատակերգությունը», Վերածննդի դարաշրջանի նկարիչների գլուխգործոցներն իրենց դրսևորման ձևով և սյուժեով կրոնական են, բայց անհնար է դրանք համարել զուտ կրոնական գործեր, քանի որ կաղքատանար այդ ստեղծագործությունների բովանդակությունը, և կդադարեին դրանք համամարդկային արժեք լինելուց:

Մշակույթի մեջ կրոնականի և ազգայինի միաձուլվածությունը բավարար հիմք չէ մշակույթի ազգային յուրահատկությունները կրոնական սկզբին հանգեցնելու կամ ազգի հոգևոր վերածնունդը կրոնաեկեղեցական վերածննդի հետ նույնացնելու համար: Արժևորելով միջնադարյան հայ մշակույթի զարգացման գործում քրիստոնեության ունեցած դերը՝ Վազգեն Ա կաթողիկոսն ասում էր, որ քրիստոնեական կրոնով հայ ժողովուրդը «միավորվեցավ ու մարմին առավ իբրև ազգ, իբրև հոգեբանություն, իբրև գիտակցություն և դարձավ մշակույթ ստեղծող ժողովուրդ: …Նույն այդ քրիստոնեական ոգին կազմավորեց նաև հայ ժողովրդի հավաքական գիտակցությունը, հայրենիքի գիտակցությունը: Սկիզբ առավ ճշմարիտ ու հարազատ հայոց ազգային պատմությունը»[7]: Ըստ նրա՝ միջնադարյան հայ մշակույթն ամբողջապես՝ ճարտարապետություն, գրականություն, երաժշտություն, պատմագրություն, շաղախված է քրիստոնեական լույսով և արդյունք է քրիստոնեական գաղափարների. «Կարելի չէ հայ ժողովրդի կյանքը, հույզերը, ապրումները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակույթը բաժանել քրիստոնեական լույսեն ու արժեքներեն»[8]:

Անշուշտ, պատմական իրողություն է, որ միջնադարի հայ մշակույթի երախտավորները գերազանցապես եղել են հոգևորականներ: Սակայն եկեղեցական այդ գործիչներն ու հոգևորականները (Մ. Մաշտոց, Ս. Պարթև, Եղիշե, Մ. Խորենացի, Գր. Նարեկացի, Հովհ. Իմաստասեր, Ներսես Մեծ, Ն. Շնորհալի, Ս. Երևանցի, Հ. Ջալալյան, Ն. Աշտարակեցի, Գևորգ Դ, Խրիմյան Հայրիկ, Գ.Հովսեփյան կաթողիկոսները և բազմաթիվ մատենագիրներ ու գրիչ-ծաղկողներ) նշանավոր են նախ և առաջ իրենց մշակութաստեղծ, գիտական-փիլիսոփայական, հայրենասիրական-ազգային գործունեությամբ: Նրանց մշակութաստեղծ գործունեությունը ամենևին էլ չի բխել եկեղեցու՝ որպես կրոնական հաստատության բնույթից կամ եկեղեցական գործչի՝ որպես կրոնավորի կարգավիճակից, այլ արդյունք է եկեղեցու՝ ազգային-մշակութային հաստատության վերածվելու իրողության և հայ եկեղեցականի ազգանվեր գործունեության, ազգային արժեքները զարգացնելու մտահոգության: Այսպիսով, փորձել հայ ժողովրդի քաղաքակրթական զարգացման ժամանակաշրջանը հաշվարկել քրիստոնեության ընդունումից, նշանակում է նախ աղավաղել, աղճատել Հայաստանի պատմամշակութային, հոգևոր և մտավոր զարգացման իրական ընթացքը, անջրպետ անցկացնել հայ մշակույթի զարգացման որակապես

[7] **Վազգեն Ա Հայրապետ Հայոց,** Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Գիրք Բ, 1959, էջ 82:
[8] Նույն տեղում, էջ 75:

տարբեր՝ հեթանոսական և քրիստոնեական փուլերի միջև: Հայ ժողովուրդն իր պատմության տարբեր փուլերում ստեղծել է մշակութային արժեքներ, որոնք իրենց արտահայտչամիջոցներով տվյալ դարաշրջանի ծնունդն են, իսկ բովանդակությամբ, էությամբ՝ հայ ժողովրդի ազգային ոգու օրինաչափ դրսևորումները: Օրինակ՝ մինչքրիստոնեական Հայաստանում հայը կառուցել է հեթանոսական տաճարներ, բագիններ, քրիստոնեական շրջանում՝ եկեղեցիներ, վանքեր, կերտել խաչքարեր: Պատմական անհերքելի իրողություն է նաև այն, որ քրիստոնեության հաստատու- մով ոչնչացվում են հայ ժողովրդի պատմական հիշողությունը պահպանող մշակութային արժեքները: Հայ հեթանոսական մշակույթի ոչնչացումով անջրպետ առաջացավ հայ ժողովրդի պատմության որակապես երկու փուլերի՝ տոհմացեղային և ավատատիրական դարաշրջանների ստեղծած մշակութային արժեքների միջև, և դրանով իսկ ջլատվեց Հայաստանի ու հայ ժողովրդի միասնական պատմությունը: Իսկ հոգևոր արժեքների հետևողական ոչնչացումը հավաստի պատմական հիշողությունը ջնջելու և հային մանկուրտ դարձնելու նպատակ է հետապնդել: Երկրորդ՝ գրերի գյուտը հաստատապես ապահովեց հայ ժողովրդի հոգևոր միասնությունը, իսկ մնացյալը՝ քրիստոնեության ազգայնացումը կամ հայ հեթանոսական ծեսերի ու տոների քրիստոնեացումը և Հայ եկեղեցու կողմից հակաքաղկեդոնական դիրքորոշման որդեգրումը, ածանցյալներ էին:

Մյուս կողմից՝ մշակույթը միասեռ-միագույն չէ, այլ բազմագույն-բազմաշերտ: Տարբեր սոցիալական խմբերի ու էթնոսների (ազգերի, ժողովուրդների) ստեղծած մշակութային արժեքների մեջ առկա է ինչպես աշխարհիկը և համամարդկայինը, այնպես էլ առանձնահատուկը՝ միայն տվյալ էթնոսին, ժողովրդին, ազգին, հանրույթին և դարաշրջանին բնորոշը: Մշակույթը օբյեկտիվորեն անպայմանորեն ներառում է աշխարհիկ սկիզբ: Այսինքն՝ մշակույթը երբեք միասեռ՝ ամբողջովին կրոնականացված չի կարող լինել: Քննելով արվեստի փիլիսոփայությանն առնչվող հարցերը՝ Ֆ. Շելլինգը մասնավորապես ասում է. «…արվեստը արվեստ է. այն իր բնույթով ի սկզբանե աշխարհիկ է և հեթանոսական, և դրա համար էլ այն քրիստոնեության մեջ որոնում է ոչ թե մասնավոր բովանդակություն, այլ այն համընդհանուրը, որը նրան կապում է հեթանոսության հետ»[9]:

Միջնադարյան հայ մշակույթը նույնպես միասեռ չի եղել. տիրապետող կրոնական ձևի մեջ դրսևորվող մշակույթին զուգահեռ, իսկ հաճախ էլ, որպես դրան հակոտնյա՝ գոյություն է ունեցել ու զարգացել է աշխարհիկ մշակույթը, ժողովրդական բանահյուսությունը[10]: Աշխարհիկ մշակույթի դրսևորումներ են Ա. Շիրակացու, Գր. Մագիստրոսի գիտական ողջ ժառանգությունը՝ փիլիսոփայական, գիտական, բանասիրական, պատմական ուսումնասիրությունները, Դ. Անհաղթի, Վ. Բաբունու, Գր. Տաթևացու, Հովհ. Որոտնեցու, Հովհ. Պլուզ Երզնկացու, Հովհ. Իմաստասերի և միջնադարի մյուս հայ նշանավոր մտածողների փիլիսոփայական և գիտական բնույթի գործերը: Վերջապես, աշխարհիկ բնույթի են հայ ժողովրդական

[9] **Шеллинг В. Ф. Й.,** ***Сочинения в 2 т., т. 2, М., 1989, с. 364.***

[10] Տե՛ս **Չալոյան Վ..,** Հայկական ռենեսանս, Ե., 1964:

բանահյուսության գլուխգործոց «Սասնա ծռեր» էպոսը և միջնադարյան բազմաթիվ վիպերգերն ու երգերը: Հայ միջնադարյան մշակույթի անբաժանելի մասն են և մշակութային մեծ արժեքներ են միջնադարում ստեղծված իրավաբանական, բժշկագիտական, գեղարվեստական բնույթի բազում գործեր: Ավելին, նույնիսկ հայ միջնադարյան մշակույթի նշանա- վոր ժողովածուները՝ «Վարք սրբոց», «Վարք հարանց», «Ճառընտիր», «Յայսմաւուրք», զուտ կրոնական համարել ճիշտ չի լինի, քանզի դրանք ընդգրկում են նաև գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական արձակ նյութեր:

Ազգային մշակույթի մեջ կրոնական սկիզբը առավել կայունանում, էթնոհոգեբանական-էթնոպաշտպան դեր է ստանձնում էթնոսի պատմական զարգացման դրամատիկ, սահմանային դարաշրջաններում: Այսպես, օրինակ, հայոց պետականության բարձումից հետո, ակամա ստանձնելով ազգային-մշակութային կյանքի կազմակերպման ու կառավարման աշխարհիկ-պետական գործառույթները, Հայ եկեղեցին այլևս դադարում է զուտ կրոնական հաստատություն լինելուց և վերածվում է ազգային կառույցի, այն է՝ ազգային արժեքների ու ազգային գաղափարախոսության կրողի, որի հետևանքով էլ ազգային գիտակցության մեջ տեղի է ունենում հայ ժողովուրդ, հայ մշակույթ և հայ եկեղեցի հասկացությունների համադրում ու նույնիսկ նույնացում: Դառնալով ազգային հավաքական շահերի արտահայտիչ ու պաշտպան՝ եկեղեցին վերածվում է էթնոմշակութային կառույցի և օժտվում նաև ազգային-մշակութային խորհրդանշանին բնորոշ հատկանիշներով[11]:

Այսպիսով, կրոնի կամ կրոնական կազմակերպության (եկեղեցու)՝ մշակույթի զարգացման գործում կատարած դերը միանշանակ դրական կամ բացասական արժևորում չի կարող ստանալ պետականություն ունեցող և պատմական երկարատև ժամանակաշրջաններում պետականությունից զուրկ ժողովուրդների կամ երկրների պատմության մեջ: Այսպես, պետականության բացակայության պայմաններում կրոնական կազմակերպությունը (եկեղեցին), իրականացնելով կրոնական կազմակերպությանը ոչ բնորոշ աշխարհիկ-պետական գործառույթներ, օբյեկտիվորեն նպաստել է ազգի, էթնոսի գոյատևմանը, իսկ այլադավան ժողովուրդների հետ գոյակցելու պայմաններում կատարել է նաև էթնոտարբերիչ դեր: Եվ երբ ազգի գաղափարական ամբողջությունը պահպանելուն ուղղված իրենց գործունեությամբ եկեղեցին և եկեղեցականը հանդես են գալիս ազգային-մշակութային կամ հասարակական գործչի դերով, նրանց այդ գործունեությունը արդեն դուրս է գալիս կրոնաեկեղեցական համակարգի շրջանակներից և ենթարկվում այլ՝ աշխարհիկ բնույթի օրենքների:

Արդի պայմաններում կրոն-մշակույթ փոխհարաբերությունը յուրօրինակ դրսևորումներ է ստանում: Դեռևս անցյալ դարում Եվրոպայում սկսված մշակութային համընդհանուր ճգնաժամը, ընդգրկելով հոգևոր արժեքների ողջ համակարգը, այդ թվում և նրա մաս կազմող կրոնական գիտակցությունը, այսօր արդեն վերածվել է Մարդու ճգնաժամի:Նշանա-

[11] Մանրամասն տե՛ս **Հարոյան Հ.**, Հայ եկեղեցին որպես էթնոմշակութային խորհրդանիշ: Միջազգ. գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, Զեկ. ժողով., Ե., 2006, էջ 485-494:

վոր հոգեբան Կ. Գ. Յունգը, չհամաձայնվելով կրոնական հավատի թուլացումը որպես մշակութային ճգնաժամի հիմնական պատճառ ներկայացնելու կրոնի սոցիոլոգների և աստվածաբանների պնդումների հետ, արևելյան մշակութային գաղափարներն ու խորհրդանիշները յուրացնելու միջոցով հոգևոր դատարկությունը լցնելու և համընդհանուր հոգևոր-գաղափարական ճգնաժամը հաղթահարելու Արևմուտքի փորձերը համարում է անարդյունավետ, քանզի, ըստ նրա, «հոգևոր ամայացման» իրական պատճառները ավելի «աշխարհիկ» բնույթի են, քան կրոնական-գերբնական[12]: Իսկ մեզ այսօր՝ այս բարդ ու անցումային փուլում՝ որպես ազգային անվտանգության անհրաժեշտ բաղադրամասի, հարկ է մտահոգ լինել ազգային ինքնության պահպանման և ազգային մշակույթի զարգացման հիմնահարցերով, այն է՝ ազգային գիտակցությունը ազատել օտարամուտ, ապազգային հենքի վրա կառուցված արժեքային համակարգից և վերադառնալ բուն ազգային արմատներին ու վերահաստատել ազգային ինքնությունը:

РЕЛИГИЯ – ФЕНОМЕН КУЛЬТУРЫ

АРОЯН Г. А.

Резюме

Проблема взаимоотношения религии и культуры многоаспектна и сложна. Сложность вопроса обусловлена прежде всего тем, что веками религия доминировала в системе духовных ценностей, тем самым оказывая существенное влияние на образ мышления и жизни людей, определяя духовный облик народов и этносов. В сущности религия как форма духовной деятельности является специфическим элементом культуры и как таковая не создает особой “религиозной культуры”, а лишь определяет форму проявления или направления ее развития.

[12] Տե՛ս Юнг К., *Архетип и символ, М., 1991, с. 110.*